

ՄԱԿ-ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ թիվ 1325 (2000) ԲԱՆԱԶԵՎ

(31 հոկտեմբերի, 2000 թ.)

Հղում անելով իր 1999թ. օգոստոսի 25-ի թիվ 1261 (1999), 1999թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1265 (1999), 2000թ. ապրիլի 19-ի թիվ 1296 (2000) և 2000թ. օգոստոսի 11-ի թիվ 1314 (2000) բանաձևերին, ինչպես նաև իր նախագահի համապատասխան հայտարարություններին և հղում անելով նաև նախագահի՝ 2000թ. մարտի 8-ին մամուլի համար արած հայտարարությանը՝ Միավորված ազգերի կազմակերպության օրվա առթիվ, նվիրված կանանց իրավունքներին և միջազգային խաղաղությանը (Կանանց միջազգային օր) (SC/6816),

հղում անելով նաև այն պարտավորություններին, որոնք ամրագրված են Պեկինի հռչակագրում և Գործողությունների ծրագրում, ինչպես նաև այն պարտավորություններին, որոնք բովանդակում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի «Կանայք 2000 թվականին. կանանց և տղամարդկանց հավասարությունը, զարգացումը և խաղաղությունը XXI դարում» (A/S-23/40/Rev.1) ամփոփիչ փաստաթղթում, մասնավորապես այն պարտավորություններին, որոնք վերաբերում են կանանց և զինված հակամարտություններին,

հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության սկզբունքներն ու նպատակները և Անվտանգության խորհրդի հիմնական պատասխանատվությունը կանոնադրությանը համապատասխան միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման խնդրում,

անհանգստություն արտահայտելով այն կապակցությամբ, որ քաղաքացիական բնակչությունը, հատկապես կանայք և երեխաները, ճնշող մեծամասնություն են նրանց շրջանում, ում վրա բացասաբար են անդրադառնում զինված հակամարտությունները, ներառյալ փախստականները և հարկադրաբար տեղաշարժվածները, և շատ հաճախ են թիրախ դառնում պատերազմող կողմերի և զինված տարրերի համար, և ճանաչելով դրանցով պայմանավորված հետևանքները կայուն խաղաղության և հաշտեցման համար,

վերստին հաստատելով կանանց կարևոր դերը հակամարտությունների կանխարգելման ու կարգավորման և խաղաղաշինության գործում և ընդգծելով նրանց իրավահավասար ու բազմակողմանի մասնակցության կարևորությունը խաղաղության և անվտանգության ամրապնդման աջակցությանն ուղղված բոլոր ձեռնարկումներին և հակամարտությունների կանխարգելմանը և կարգավորմանն առնչվող որոշումների կայացման գործընթացում նրանց դերի բարձրացման անհրաժեշտությունը,

վերստին հաստատելով նաև միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների նորմերի լիակատար հարգանքի անհրաժեշտությունը, որոնք պաշտպանում են կանանց և աղջիկների իրավունքները հակամարտությունների ժամանակ և դրանցից հետո, հատկապես նշելով այն պայմանի համակողմանի ապահովումը, որ ականազերծման և ականների վտանգավորության մասին տեղեկատվական ծրագրերում հաշվի առնվեն կանանց և աղջիկների հատուկ պահանջները,

ընդունելով խաղաղության պահպանման գործում գենդերային հիմնախնդիրները հաշվի առնելու խիստ անհրաժեշտությունը և այդ կապակցությամբ հիշատակելով Վինդհուկյան հռչակագիրը և խաղաղության պահպանման բազմատարր գործողությունների իրականացման ժամանակ գենդերային հիմնախնդիրների ընդգրկման ապահովմանն ուղղված գործողությունների Նամիբյան պլանը (S/2000/693),

ընդունելով նաև ամբողջ խաղաղաստեղծ աշխատակազմի՝ կոնֆլիկտային իրավիճակներում կանանց և երեխաների իրավունքների և հատուկ պահանջմունքների պաշտպանության հարցերի վերաբերյալ ուսուցման համար հանձնարարականների կարևորությունը, որոնք ամփոփված են իր նախագահի հայտարարության մեջ՝ արված 2000թ. մարտի 8-ին,

ընդունելով, որ կանանց և աղջիկների վրա զինված հակամարտությունների ազդեցության ըմբռնումը և արդյունավետ կազմակերպչական մեխանիզմների առկայությունը, որոնք երաշխավորում են նրանց պաշտպանությունը և լիակատար մասնակցությունը խաղաղարար գործընթացին, կարող են զգալիորեն նպաստել միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդմանը,

նշելով կանանց և աղջիկների վրա զինված հակամարտությունների ազդեցության վերաբերյալ ընդհանրացնող տվյալների անհրաժեշտությունը՝

1. համառորեն կոչ է անում անդամ պետություններին ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելմանը, կարգավորման և հանգուցալուծման ազգային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների կայացմանը բոլոր մակարդակներում,

2. կոչ է անում Գլխավոր քարտուղարին իրականացնել իր գործողությունների ռազմավարական պլանը (A/49/587), որում առաջարկվում է ակտիվացնել կանանց մասնակցությունը դիրեկտիվ մակարդակներում հակամարտությունների կարգավորման և խաղաղարար գործընթացներին,

3. համառորեն կոչ է անում Գլխավոր քարտուղարին ավելի շատ կանանց նշանակել հատուկ ներկայացուցիչների և պատվիրակների պաշտոններում և հանձնարարել նրանց բարի ծառայություններ մատուցել իր անունից և այդ կապակցությամբ կոչ է անում անդամ պետություններին թեկնածություններ ներկայացնել Գլխավոր քարտուղարին պարբերաբար նորացվող կենտրոնական ցուցակում ընդգրկելու համար,

4. այնուհետև համառորեն կոչ է անում Գլխավոր քարտուղարին հասնել Միավորված ազգերի կազմակերպության դաշտային գործողությունների շրջանակներում կանանց դերի և ավանդի ընդլայնմանը և հատկապես ռազմական դիտորդների, քաղաքացիական ոստիկանական անձնակազմում, մարդու իրավունքների գծով աշխատակիցների և մարդասիրական անձակազմի շարքերում,

5. իր պատրաստակամությունն է հայտնում գենդերային հեռանկարներ գծել խաղաղության պահպանման գործողություններում և համառորեն կոչ է անում Գլխավոր քարտուղարին այնտեղ, որտեղ տեղին է, ապահովել գենդերային տարրի ընդգրկումը դաշտային գործողություններում,

6. խնդրում է Գլխավոր քարտուղարին հրահանգներ տալ անդամ պետություններին պատրաստության առնչությամբ և կանանց պաշտպանությանը, իրավունքներին և հատուկ

պահանջմունքներին, ինչպես նաև խաղաղության պահպանման և խաղաղաշինական բոլոր միջոցառումներում կանանց ներգրավելու նշանակությանը վերաբերող նյութեր տրամադրել նրանց, առաջարկում է անդամ պետություններին ներառել այդ տարրերը, ինչպես նաև զինվորական և քաղաքացիական անձնակազմի ընդարձակման նախաշեմին նրանց ուսուցման ազգային ծրագրերում ներառել ՄԱԿ/ՉԻԱՀ-ի խնդրի ըմբռնման հարցերը և խնդրում է այնուհետև Գլխավոր քարտուղարին ապահովել քաղաքացիական անձնակազմի համանման ուսուցումը խաղաղության պահպանման գործողությունների վերաբերյալ,

7. համառորեն կոչ է անում անդամ պետություններին ընդլայնել իրենց կամավոր ֆինանսական, տեխնիկական և նյութական աջակցությունը անձնակազմի պատրաստությանը՝ գենդերային հայեցակետերի հաշվառումով, ներառյալ համապատասխան հիմնադրամների և ծրագրերի ձեռնարկումները, այդ թվում ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի վարչության և համապատասխան այլ մարմինների.

8. կոչ է անում բոլոր գործող անձանց հաշտության համաձայնությունների բանակցությունների և իրականացման գործընթացում ցուցաբերել գենդերային հայեցակետերի վրա հիմնված մոտեցում, այդ թվում՝

ա) ներգաղթի և արտագաղթի ընթացքում կանանց և աղջիկների առանձնահատուկ պահանջմունքների, ինչպես նաև այն խնդիրների, որոնք առնչվում են վերականգնմանը, վերաինտեգրմանը և հետկոնֆլիկտային վերակառուցմանը,

բ) այն միջոցառումների, որոնք ուղղված են կանանց խաղաղարար տեղական նախաձեռնությունների, ինչպես նաև հակամարտությունների կարգավորման տեղական գործընթացների և խաղաղ համաձայնությունների իրականացման բոլոր գործող մեխանիզմներում կանանց ներգրավման աջակցությանը,

գ) այն միջոցառումների, որոնք ապահովում են կանանց և աղջիկների մարդու իրավունքների պաշտպանությունն ու հարգանքը, մանավանդ այն իրավունքների, որոնք վերաբերում են սահմանադրությանը, ընտրական համակարգին և ոստիկանության ու դատական մարմինների գործունեությանը,

9. կոչ է անում զինված հակամարտությունների բոլոր կողմերին լիակատար կերպով պահպանել կանանց և աղջիկների՝ հատկապես որպես քաղաքացիական անձանց, իրավունքներին առնչվող միջազգային-իրավական նորմերը, մասնավորապես նրանց նկատմամբ պարտավորությունները համաձայն 1949 թ. Ժնևյան կոնվենցիայի և դրա 1977 թ. արձանագրությունների, 1951 թ. Փախստականների մասին կոնվենցիայի և դրա 1967 թ. արձանագրության, ՄԱԿ-ի 1979 թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի և ՄԱԿ-ի 1989 թ. Երեխաների մասին կոնվենցիայի և դրա 2000թ. մայիսի 25-ի երկու կամընտիր արձանագրությունների, և հաշվի առնել Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի համապատասխան դրույթները,

10. կոչ է անում զինված հակամարտությունների բոլոր կողմերին հատուկ միջոցներ ձեռնարկել զինված հակամարտության բնույթի իրավիճակներում կանանց և աղջիկներին սեռի հատկանիշով բռնություններից, հատկապես բռնաբարություններից և սեռական ոտնձգություններից և բռնության այլ ձևերից պաշտպանելու համար,

11. հատկապես նշում է, որ բոլոր պետությունները պատասխանատվություն են կրում անօրինականությանը վերջ դնելու և այն անձանց դատական պատասխանատվության ենթարկելու համար, որոնք մեղավոր են ցեղասպանության, մարդկության դեմ և ռազմական

հանցագործության մեջ, ներառյալ կանանց և աղջիկների նկատմամբ սեռական և այլ բնույթի բռնություններին առնչվող հանցագործությունները, և այդ կապակցությամբ ընդգծում է այն անհրաժեշտությունը, որ հնարավորության դեպքում այդ հանցագործությունների վրա չտարածվի համաներման մասին դրույթի ազդեցությունը,

12. կոչ է անում զինված հակամարտությունների բոլոր կողմերին հարգել փախստականների ճամբարների և բնակավայրերի քաղաքացիական և մարդասիրական բնույթը և ուշադրություն դարձնել կանանց և աղջիկների հատուկ պահանջմունքներին, այդ թվում և դրանք նախատեսելիս, և հղում է անում իր 1998 թ. նոյեմբերի 19-ի 1208 (1998) և 2000 թ. ապրիլի 19-ի 1296 (2000) բանաձևերին:

13. իր պատրաստակամությունն է հայտնում հաշվի առնելու գենդերային հայեցակետերը խաղաղության պահպանման գործողություններում և հաստատակամորեն կոչ է անում Գլխավոր քարտուղարին ապահովել գենդերային բաղադրիչի ընդգրկումը բոլոր դաշտային գործողություններում,

14. վերահաստատում է իր պատրաստակամությունն ամեն անգամ, երբ կատարվում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 41-րդ հոդվածով նախատեսված միջոցառումները, հաշվի առնելու դրանց հնարավոր հետևանքները քաղաքացիական հասարակությունում՝ ուշադրության կենտրոնում պահելով կանանց և աղջիկների հատուկ պահանջմունքները այն նկատառումով, որ կանխատեսվեն համապատասխան մարդասիրական բացառություններ,

15. իր պատրաստակամությունն է հայտնում ապահովելու, որպեսզի Անվտանգության խորհրդի առաքելությունները հաշվի առնեն գենդերային նկատառումները և կանանց իրավունքները, ներառյալ կանանց խմբերի հետ տեղական և միջազգային խորհրդատվության անցկացման միջոցով,

16. խնդրում է Գլխավոր քարտուղարին հետազոտություն անցկացնել՝ պարզելու համար զինված հակամարտությունների ազդեցությունը կանանց և աղջիկների վրա, կանանց դերը խաղաղաշինության գործում և խաղաղ գործընթացների ու հակամարտությունների կարգավորման գենդերային հայեցակետերը և այնուհետև խնդրում է նրան զեկույց ներկայացնել Անվտանգության խորհրդին այդ հետազոտության արդյունքների մասին և դնել այն Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետությունների տրամադրության տակ,

17. խնդրում է Գլխավոր քարտուղարին համապատասխան դեպքերում Անվտանգության խորհրդին ներկայացվող իր զեկույցներում տեղեկատվություն ընդգրկել խաղաղապահական առաքելություններ իրականացնելիս գենդերային խնդիրների հաշվառման ուղղությամբ գործադրվող ջանքերի և կանանց ու աղջիկներին առնչվող մնացած բոլոր հայեցակետերի մասին,

18. որոշում է շարունակել այդ հարցերի ուղղությամբ ակտիվ գործունեությունը: